



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

2013թ. Տարբերի 22 - ի թիվ 5/9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՍԱԴՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ,
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՅ ԿԱՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի
գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետությանը տրամադրված օտարերկրյա
պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային,
դրամաշնորհային և ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին «Համայնքային զարգացման
ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից կատարված ծրագրերի
նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ
հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ՉԱԶԱՐՅԱՆ



Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊԽ որոշողի
2013թ. մարտի 22-ի թիվ 5/9 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՍԱԴՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԱՐԿԱՅԻՆ, ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏԱՍՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը` ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի գործունեության տարեկան ծրագրի 6.4 կետը և Վերահսկիչ պալատի խորհրդի 2012 թվականի հունվարի 24-ի թիվ 2/4 որոշումը:

Վերահսկողության նպատակը` «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող` օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից ՀՀ տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին ծրագրերի նկատմամբ ուսումնասիրությունն է:

Վերահսկողության առարկան` «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպություններից ՀՀ տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործումը:

Վերահսկողության օբյեկտը` «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ:

Վերահսկողության կատարման ժամկետը` 01.02.2012 -31.12.2012թ.

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը` 2009թ.-ի հունվարի 1-ից մինչև 2012 թվականի հոկտեմբերի 19-ը ներառյալ:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևով, ինչպես նաև կիրառվել են ֆինանսական, արդյունավետության (կատարողական) և համապատասխանության տեսակները: Կիրառվել է ընտրանքային մեթոդի ոչ վիճակագրական եղանակ: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են դիտարկման և ստուգման արդյունքում ստացված տվյալները:

1. Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիրը սկսվել է 2005թ.-ին և ավարտվել է 2011թ.-ի դեկտեմբերի 31 -ին:

2. «Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի» նպատակը

Ծրագրի հիմնական նպատակն է՝ Երևան քաղաքն ապահովել շուրջօրյա հուսալի ջրամատակարարմամբ խելամիտ գնով, միևնույն ժամանակ ,նվազեցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:

Ծրագիրը նպատակաուղղված է շարունակել Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող իր նախորդ՝ Համայնքային զարգացման ծրագրի շրջանակներում սկսված Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավումները:

Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի հիմնական ռազմավարական խնդիրներն են՝

- կայուն և ապահով շուրջօրյա ջրամատակարարման ապահովում մատչելի գներով,
- շրջակա միջավայրի աղտոտման նվազեցում,
- ջրամատակարար կազմակերպության մասնավոր շահագործում և կառավարում,
- ջրամատակարարման և ջրահեռացման ընկերության ֆինանսական կայունություն:

Ծրագրի բաղադրիչները երկուսն են՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր (այսուհետ՝ ԵՋՁԾ հիմնադրամ) հիմնադրամ և Տեխնիկական աջակցություն:

1-ին բաղադրիչ - Ծրագրի իրականացման ընթացքում ԵՋՁԾ հիմնադրամի միջոցների հաշվին կոնկրետ ներդրումները որոշվում են Վարձակալի կողմից՝ հետևյալ ուղղություններով՝

ա/ Էլեկտրաէներգիայի խնայողություն,.

բ/ ջրամատակարարման հուսալիության մակարդակի բարձրացում և շահագործման վերահսկում,

գ/ շրջակա միջավայրի աղտոտման աստիճանի նվազեցում:

2. 2-րդ բաղադրիչ- տեխնիկական աջակցություն, որով նախատեսվում է ֆինանսավորել.

- վարձակալի կատարողականության տեխնիկական աուդիտ,
- ծրագրի և վարձակալական ընկերության ֆինանսական աուդիտ,
- ծրագրի մոնիթորինգի գրասենյակի (այսուհետ՝ ԾՄԳ) գործունեության գործառնական ծախսերի իրականացում:

Ծրագրի իրականացման ընթացքում, հատկացված միջոցները արդյունավետ ծախսելու նպատակով, ինչպես նաև Ծրագրի նախապատրաստման կանխավճարի չօգտագործված մնացորդը, համաձայնագրով նախատեսված նպատակներին ծառայեցնելու համար, անհրաժեշտություն է առաջացել վարկային համաձայնագրում՝ 28.06.2007թ. և 25.01.2011թ. կատարել փոխություններ՝ վարկային միջոցները վերաբաշխելով ըստ ԵԶԶԾ հիմնադրամի գնումների պլանով նախատեսված աշխատանքների և ծառայությունների համապատասխան կատեգորիաների միջև:

Կատարված փոփոխությունների արդյունքում «Աշխատանքներ» կատեգորիայի համար հատկացված գումարը սկզբնական նախատեսվածի համեմատ ավելացել է 1,208,898 ՓՀԻ-ին կամ 1,859,8 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք գումարով կամ 11,2%, «Ապրանքներ» կատեգորիայով՝ նվազումը կազմել է 181,833 ՓՀԻ կամ 279,7 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք գումարով, «Խորհրդատվական ծառայություններ» կատեգորիայով նվազումը կազմել է 870,259 ՓՀԻ կամ 1,338,8 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք գումարով, ինչը պայմանավորված է ծրագրի իրականացման ռազմավարության փոփոխմամբ:

Վերահսկողության արդյունքները՝

1. «Ապրանքներ»

Հիմք ընդունելով 2005 թվականի դեկտեմբերի 14-ի Երևանի «Զրմուղ-կոյուղի» փակ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) սպասարկման տարածքի ջրային համակարգերի վարձակալության մասին պայմանագրի 4-րդ և 5-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված 2004 թվականի փետրվարի 9-ի «Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ծրագրի նախապատրաստման կանխավճարի վերաբերյալ» N Q3960 AM և 2005 թվականի ապրիլի 15-ի «Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր» N 4038 AM վարկային համաձայնագրերի շրջանակներում ձեռք բերված ապրանքների տնօրինման, ձևակերպման և ընդունման համար 2007 թ.-ի դեկտեմբերի 11-ին ԾՄԳ-ի և Ընկերության կողմից համատեղ հաստատվել է համապատասխան կարգ, որով ղեկավարվել են ծրագրի իրականացման ընթացքում:

ԾՄԳ-ի և Ընկերության միջև կնքված պահատվության պայմանագրի համաձայն ընկերության պահեստ ի պահ է հանձնվել Ծրագրի շրջանակներում 1,427,881.4 հազ.դրամի ապրանքանյութական արժեքներ (տարբեր տրամաչափի պողպատյա և պլաստմասե խողովակներ, փականներ, տարբեր հզորության պոմպեր, ճնշման կարգավորիչներ և այլն, այդ թվում նախորդ ծրագրով 12,627.4 հազ. դրամի ապրանքանյութական արժեքներ համատիրությունների կայացման և զարգացման համար ճապոնական կառավարության դրամաշնորհի շրջանակում), որից ներդրումային հիմնադրամով նախատեսված և վարձակալության մասին պայմանագրով՝ «Պահպանման և վերանորոգման աշխատանքների ընդլայնված ծրագրի» շրջանակներում, ԾՄԳ-ի գրավոր համաձայնությամբ, օգտագործել են 1,103,494.0 հազ. դրամի ապրանքանյութական արժեքներ, իսկ մնացորդը՝ 324,387.4 հազ. դրամի ապրանքանյութական արժեքները գտնվում են Ընկերության պահեստում:

Վերահսկողության ստուգման փուլում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ վերը նշված 324,387.4 հազ. դրամի մնացորդը արձանագրված է ԾՄԳ-ի և Ընկերության ս/թ-ի հունիսի 26-ից՝ հուլիսի 10-ը իրականացված գույքագրման ակտով:

Վերահսկողության ընթացքում, հաշվի առնելով, որ Ընկերությանը վարձակալության հանձնված գույքը հանդիսանում է պետական սեփականություն, և տնօրինման հարցերը համակարգվում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրտնտեսությունների կողմից, ուստի կողմերի միջև քննարկումներ կազմակերպելու և առկա մնացորդի տնօրինման հարցը կարգավորելու նպատակով ս/թ-ի հունիսի 7-ին ԾՄԳ-ի կողմից տեղեկացվել է պետական մարմնին:

Ծրագրի սկզբից մինչև 2009թ.-ի հունվարի 1-ը կնքվել են ապրանքների մատակարարման թվով 17 պայմանագրեր, որից 7-ը՝ գնանշման հարցման եղանակով, իսկ 10-ը՝ միջազգային մրցույթով:

2009թ.-ի հունվարի 1-ից մինչև Ծրագրի ավարտը, կայացած միջազգային մրցույթի արդյունքում, կնքվել է ապրանքների մատակարարման ևս մեկ պայմանագիր:

Մրցույթի հայտարարությունը գետեղվել է 2008թ.-ի օգոստոսի 18-ին «Բիզնես Դիվելոպմենթ» միջազգային ամսագրում և 2008թ.-ի օգոստոսի 23-ին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

Մրցառքային փաստաթղթերը ուղարկվել են «Սունիր» (Իրանի Իսլամական Հանրապետություն), «Սալցգիտեր Սանեսման լայն» (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն) և «Քոնփայի» (Նիդերլանդների Թագավորություն) ընկերություններին:

«Մունիթր» և «Մալցգիտեր Մանեսման լայն» ընկերություններից ստացվել են հայտեր (տեխնիկական և ֆինանսական) համապատասխանաբար՝ 462,773.1 հազ. եվրո և 571,329.0 հազ. եվրո գնային առաջարկություններով:

Հայտերի տեխնիկական գնահատման նպատակով Ընկերության գնումների հանձնաժողովի կողմից ստեղծվել է 3 հոգուց բաղկացած աշխատանքային խումբ, որը կատարել է տեխնիկական բնութագրերի ուսումնասիրություն՝ տեխնիկական մասնագրերով ներկայացված հայտերի համապատասխանատվության առումով:

Հայտերի բացումը հանձնաժողովի կողմից տեղի է ունեցել 2008թ.-ի հոկտեմբերի 7-ին:

Արդյունքում, Ընկերության գնումների հանձնաժողովի կողմից իրանական «Մունիթր» ընկերության հայտը մերժվել է հետևյալ հանգամանքներից ելնելով՝

- տեխնիկական մասնագրերին համապատասխան ներկայացված հայտում բացակայում է 250 սմ. տրամագծով խողովակների համար առաջարկվող գինը,

- ներկայացվել է միայն 1/2-ից մինչև $8^{5/8}$ դույն տրամագծով խողովակների արտադրության համար ISO սերտիֆիկատ,

- ներկայացված հայտում բացակայում է խողովակներ արտադրողի լիազորագիրը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրտնտեսությունների «Համայնքային զարգացում» ծրագրի կառավարման խորհրդի կողմից 2008թ.-ի դեկտեմբերի 9-ի նիստի թիվ 2/16 արձանագրության համաձայն, Ընկերության գնումների հանձնաժողովի գնահատման գեկույցի հիման վրա, հաղթող է ճանաչվել «Մալցգիտեր Մանեսման լայն» ընկերությունը: 2009թ.-ի հունվարի 21-ին պայմանագիր է կնքվել 16,8կմ. պողպատյա խողովակների գնման համար՝ 571,329.0 հազ. եվրո արժեքով, որը համապատասխանում է տվյալ ժամանակահատվածի միջազգային գներին:

2. «Վարձակալության պայմանագիր»

Ընկերության սպասարկման տարածքի ջրային համակարգերի “Վարձակալության պայմանագիրը” Հավելված 6-ով Ընկերության համար սահմանում է հետևյալ կատարողական չափանիշները և որակի նկատմամբ պահանջները.

ա/ ջրամատակարարման տևողության /շարունակականության/ բարելավում,

բ/ ջրի որակ,

գ/սպառողների բողոքներին սահմանված ժամկետում արձագանքում և վթարների վերանորոգման ժամկետը,

ա/ Ջրամատակարարման շարունակականության բարելավում
 “Ջրամատակարարման տնօրոջության բարելավում” ցուցանիշը սահմանում է տարեկան նպատակակետերը 24 ժամվա կտրվածքով՝ տոկոսով արտահայտված (Աղյուսակ 2):

Ջրամատակարարման սկզբնական և վերանայված նպատակակետեր

Աղյուսակ 2

Պայմանագր. տարի	Շարունակական ջրամատակարարում ունեցող բաժանորդների տոկոս	
	Սկզբնական տարեկան նպատակակետեր	Վերանայված տարեկան նպատակակետեր
-		
1ին տարի	78.7%	-
2րդ տարի	80.5%	-
3րդ տարի	82.3%	75.5%
4րդ տարի	84.1%	79.0%
5րդ տարի	85.9%	82.5%
6րդ տարի	87.8%	86.0%
7րդ տարի	89.6%	89.0%
8րդ տարի	91.4%	91.5%
9րդ տարի	93.2%	93.5%
10րդ տարի	95.0%	95.0%

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առաջին երկու տարիներին (31.05.2006 - 31.05.2008թթ..) Ընկերությունը ջրամատակարարման համակարգում գործնականում չի իրագործել ոչ մի բարելավում, և պայմանագրային 2-րդ տարվա արդյունքը շատ ավելի ցածր էր՝ 72.6%, քան պայմանագրով սահմանված՝ 80.5% նպատակակետը:

Ուստի, համաձայն պայմանագրի պահանջների, տեխնիկական աուդիտը իրականացրած դանիական “Ռամբոլ” ընկերությունը 225,095.0 հազ. դրամ տուգանք է նշանակել ընկերությանը:

Արդյունքում, 2008թ.-ին փոխվել է ընկերության ղեկավար կազմը և Վարձատուն՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրտնտեսական հարցերի բանակցությունների ընթացքում համաձայնվել է փոխել տարեկան նպատակակետերը:

Վերանայման արդյունքում 3-ից 7-րդ տարիների նպատակակետերը իջեցվել են, իսկ 8-րդ և 9-րդ տարիներին՝ բարձրացվել, և վերջին 10-րդ տարվա նպատակակետը մնացել է անփոփոխ:

Ընկերությունը հետագայում պայմանագրային III-ից VI-րդ տարիներին ջրամատակարարման շարունակականության փաստացի արդյունքները բավարարել է վերանայված ցուցանիշների պահանջը:

Չնայած ցուցանիշների պահանջի բավարարմանը դեռևս բաժանորդների 12%-ը (ավելի քան 100 000 մարդ) ունեն 12 ժամից պակաս տևողությամբ ջրամատակարարում հատկապես՝ Երևան քաղաքի Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններում:

բ/. Ջրի որակ

Վարձակալության պայմանագրի համաձայն Ընկերության կողմից կազմվել է ջրի որակի վերահսկման ծրագիր , ինչը գործնականում կիրառվում է հետևյալ սկզբունքներով.

- նմուշառում ջրաղբյուրներում, մայր ջրատարներում և օրվա կարգավորման ջրամբարներում,
- մնացորդային քլորի նմուշառում ջրատարներում և օրվա կարգավորման ջրամբարներում,
- նմուշառում ջրատարներում և օրվա կարգավորման ջրամբարներում,
- նմուշառում ներքաղաքային բաշխման ջրատարներում նախապես սահմանված կետերում,
- քիմիական անալիզներ օրվա կարգավորման ջրամբարներում,
- նմուշառում վթարված խողովակների վերանորոգումներից հետո՝ նախքան ջրամատակարարման վերականգնումը:

Համաձայն տեխնիկական աուդիտորի ընդհանուր առմամբ, Երևանում ջրի որակը պայմանագրային III-ից VI-րդ տարիներին բավարար է, և Ընկերությունը ապահովել է նվազագույն պահանջվող նորմերը:

գ/սպառողների բողոքներին սահմանված ժամկետում արձագանքում և վթարների վերանորոգման ժամկետը,

Վարձակալության պայմանագրով և “Վարձակալի կատարողական ցուցանիշների փաստագրման և դրանց հիման վրա տուգանքների հաշվարկման մեթոդաբանության փոփոխությունների և լրացումների մասին” 25.04.08թ. Համաձայնագրով ջրատարներում և բաշխիչ ցանցում Խոշոր (200մմ և ավելի տրամագծով ջրագծերի վրա) պայթյունների և վթարների վերաբերյալ ահազանգերին արձագանքումն ու վերանորոգումը պետք է ապահովվի 24 ժամվա ընթացքում:

Վարձակալության պայմանագրով բաժանորդների կողմից ներկայացված գրավոր դիմում-բողոքների արձագանքման միջին ժամանակահատվածը սահմանված է 10 աշխատանքային օր: Վերը նշված նորմերը գերազանցող ժամանակի յուրաքանչյուր 10%-ի համար համաձայն վարձակալության պայմանագրի Ընկերության նկատմամբ կհաշվարկվի տուգանք՝ 1,008.0 հազ. դրամի չափով:

Համաձայն տեխնիկական աուդիտորի եզրակացության, պայմանագրային 4-րդ, 5-րդ և 6-րդ տարիներին (2009-2012թթ..) Ընկերությունը ապահովել է վթարների և բաժանորդների գրավոր դիմում-բողոքների արձագանքման նորմատիվներով սահմանված ժամանակահատվածը:

3. Ջրարտադրություն և կորուստ

Ընկերության կողմից սպասարկվող բաշխիչ ցանցում չհաշվառված ջուրը (առևտրային և տեխնիկական կորուստները) կազմում է քաղաք և գյուղեր հասնող ջրի ծավալի ավելի քան 80%-ը (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

(հազ. մ³)

Չափանիշներ	Բազիս. տարի 2005/06	1ին տարի՝ 2006/07	2րդ տարի 2007/08	3րդ տարի 2008/09	4րդ տարի 2009/10	5րդ տարի 2010/11	6րդ տարի 2011/12
Ջրարտադրության ծավալը	358200	367700	371800	370100	355400	334691	312720
Ջրաչափված սպառում	59000	56710	56100	58650	54800	58410	61140
Ջրի ընդհանուր կորուստը (%)	83.5	84.6	84.9	84.2	84.6	82.55	80.45

Ծրագրի սկզբից միայն 5-րդ և 6-րդ պայմանագրային տարիներում է գրանցվել ջրակորուստների կրճատման միտում, սակայն այն մտահոգիչ է, քանի որ միջազգային պրակտիկայում կորուստը չի գերազանցում ջրարտադրության ծավալի 20 տոկոսը:

4. «Շինարարական աշխատանքներ»

Շինարարական աշխատանքների վերահսկողության ստուգման փուլում կատարված ուսումնասիրությունների ընթացքում պարզվեց, որ Ծրագրի ներդրումային հիմնադրամի շրջանակներում իրականացված աշխատանքները ամբողջությամբ ավարտվել են 2011թ.-ի դեկտեմբերի 30-ին: Վերահսկողության փուլում հիմնականում իրականացվել են օրվա կարգավորիչ ջրամբարների վերականգնման ու վերակառուցման, ջրամբարներում՝ քլորացման սարքավորումների մատակարարման և տեղադրման, մայր ջրատար համակարգերի վերականգնման, օդահեռ, ջրթող և գծային փականների փոխարինման և դիտահորերի վերակառուցման աշխատանքներ:

Դիտարկման ընթացքում նշված օբյեկտներում հսկիչ չափագրումներ չեն իրականացվել հաշվի առնելով այն, որ օբյեկտների շահագործման ժամանակավոր դադարեցումը և ջրամբարների դատարկումը տեխնոլոգիական առումով նպատահարմար չէ, քանի որ այն կրեթի մեծաթիվ բաժանորդների ջրագրկման, բերելով վարձակալության պայմանագրով նախատեսված շարունակական ջրամատակարարման կատարողականության ցուցանիշի նվազման, ինչպես նաև «Երևան Ջուր» ՓԲԸ կողմից չնախատեսված ֆինանսական միջոցների ծախսերի, որոնք նախքան իրականացնելը պետք է համաձայնեցվեն ֆրանսիական սեփականատիրոջ հետ պահանջելով զգալի ժամանակ:

Այդ իսկ պատճառով դիտարկման են ենթարկվել միայն օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերը, նրանց համապատասխանությունը կատարողական ակտերին, օբյեկտներում առանց հսկիչ չափագրումների իրականացման:

Եզրակացություն

1. ԾՄԳ-ի և Ընկերության միջև կնքված պահատվության պայմանագրի համաձայն ընկերության պահեստ ի պահ է հանձնվել Ծրագրի շրջանակներում 1,427,881.4 հազ.դրամի ապրանքանյութական արժեքներ, որից ներդրումային հիմնադրամով նախատեսված և վարձակալության մասին պայմանագրով՝ «Պահպանման և վերանորոգման աշխատանքների ընդլայնված ծրագրի» շրջանակներում ԾՄԳ-ի գրավոր համաձայնությամբ օգտագործել են՝ 1,103,494.0 հազ. դրամի ապրանքանյութական արժեքներ, իսկ մնացորդը՝ 324,387.4 հազ. դրամի ապրանքանյութական արժեքները գտնվում են Ընկերության պահեստում:

2. Ընկերությանը վարձակալությամբ հանձնված գույքը հանդիսանում է պետական սեփականություն և տնօրինման հարցերը համակարգվում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրտնտեսությունների կողմից, ուստի կողմերի միջև քննարկումներ կազմակերպելու և առկա մնացորդի տնօրնման հարցը կարգավորելու նպատակով ս/թ.-ի հունիսի 7-ին ԾՄԳ-ի կողմից տեղեկացվել է պատկան մարմնին:

3. Բաժանորդների 12%-ը (ավելի քան 100 000 մարդ) ունեն 12 ժամից պակաս տևողությամբ ջրամատակարարում հատկապես՝ Երևան քաղաքի Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններում:

4. Ծրագրի սկզբից միայն V-րդ և VI-րդ պայմանագրային տարիներում է գրանցվել ջրակորուստների կրճատման միտում, սակայն այն մտահոգիչ է, քանի որ միջազգային պրակտիկայում կորուստը չի գերազանցում ջրարտադրության ծավալի 20 տոկոսը:

Առաջարկություններ

Երևանի քաղաքապետին՝

1. Հիմք ընդունելով 2009թ.-ի սեպտեմբերի 10-ի թիվ 1042-Ն որոշմամբ Երևանի քաղաքապետին վերապահված Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի բաժնետոմսերի կառավարման, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմնադիր լիազորությունները, անհրաժեշտ է ջրառի նվազեցման, էլեկտրատեղեղիայի խնայողության և հոսակորուստների նվազեցման հարցերը բարձրացնել որպես վարձակալության պայմանագրով նախատեսված կատարողական լրացուցիչ ցուցանիշներ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրտնտեսություններին

1. Ապահովել վարկային և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներով ձեռք բերված գույքի հաշվառումը ՀՀ և միջազգային հաշվապական ստանդարտներին համապատասխան:

2. Ծրագրի շրջանակներում ներգրավված վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներով շինարարական աշխատանքների և մատուցված ծառայությունների արդյունքում ձևավորված ակտիվները, ինչպես նաև ծրագրի շրջանակներում ձեռք բերված և Ընկերությանը ի պահ հանձնված՝ չօգտագործված 324,387.5 հազ.դրամ արժեքով ապրանքանյութական արժեքները անհրաժեշտ է սահմանված կարգով ամրացնել «Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին,

գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարելով Ընկերության միջոցների հաշվին:

Վերականգնման ենթակա գումարները փոխանցել գանձապետարանում ՀՀ վերահսկիչ պալատի անվանք բացված թիվ 96900005281515 «Պետությանը պատճառված վնասների փոխհատուցումից մուտքեր» եկամտային հաշվին:



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (+374 10) 514 101, 514 200, Ֆաքս՝ (+374 10) 545 944, Էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 04/45-21156-1

«18» 04 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Ա. Գևորգյանի 09.04.2013թ. N 01/15/1826-13 գրության՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 22.03.2012թ. հ.5/9 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ, տեղեկացնում եմ, որ «Համայնքային զարգացման ծրագրերի գրասենյակ» ՊՀ-ի կողմից կատարված վարկային ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքները քննարկվել են քաղաքապետարանում, որոնց վերաբերյալ ներկայացվում են հետևյալ պարզաբանումները.

- Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի Վարձակալության պայմանագրով չնախատեսված կատարողական լրացուցիչ ցուցանիշներ սահմանելու մասով հայտնում եմ, որ Վարձակալության պայմանագիրը ստորագրված է եռակողմ՝ ֆրանսիական «Քոմփանի Շեներալ դեզ Օ» կազմակերպության մասնակցությամբ, ուստի պայմանագրի յուրաքանչյուր կետի փոփոխություն անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել ֆրանսիական կողմի հետ, որը, ինչպես նախորդ տարիների փորձը ցույց է տալիս, երկարատև գործողությունների շղթա է:

Բացի այդ, ս/թ հունիսի 1-ից մեկնարկելու է պայմանագրային 8-րդ տարվա համար նախատեսված Բիզնես պլանը, հետևաբար ներկա պահին նպատակահարմար չէ անդրադառնալ Վարձակալության պայմանագրում կատարողական լրացուցիչ ցուցանիշներ սահմանելու գործընթացին:

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի շրջանակում վարկային և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներով ձեռք բերված գույքի


2.2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՍՈՒՄԱՐԱՏ
100-9850
19 04 2013

✓

հաշվառման մասով՝ տեղեկացնում եմ, որ «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտե է ներկայացվել ՀՀ կառավարության «Վարկային համաձայնագրերի շրջանակներում ձեռք բերված ակտիվների ամրացման և «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության հանձնված և հանձնվող գույքի մասին» որոշման նախագիծ, որի 1-ին կետի համաձայն՝ «Վարկային ծրագրի շրջանակում ձեռք բերված և «Երևան Ջուր» ՓԲԸ-ին ի պահ հանձնված՝ չտեղադրված հիմնական միջոցները և չօգտագործված ապրանքանյութական արժեքները՝ 324 387 449,76 ՀՀ դրամ գումարի չափով, սահմանված կարգով կամրացվեն «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի շրջանակում վարկային և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներով ձեռք բերված գույքը «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկում հաշվառվում է համակարգչային հաշվապահական «Հայկական ծրագրերով», որը պարբերաբար թարմացվում և համապատասխանեցվում է միջազգային ստանդարտներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ռ. Փիլոսյան

Կատ.՝ Ջ. Սարոյան
J 514 - 223

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/9 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ (ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե)

<p>ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ</p>	<p>ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)</p>	<p>Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն</p>
<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության կոմիտեի Ապահովել վարկային և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներով ձեռք բերված գույքի հաշվառման ՀՀ և միջազգային հաշվապահական ստանդարտներին համապատասխան:</p> <p>Ծրագրի շրջանակներում ներգրավված վարկային միջոցառումների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներով շինարարական աշխատանքների և մատուցված ծառայությունների արդյունքում ձևավորված ակտիվները, ինչպես նաև ծրագրի շրջանակներում ձեռք բերված և Ընկերությանը ի պահ հանձնված՝ չօգտագործված 324,387.5 հազ.դրամ արժեքով ապրանքանյութական արժեքները անհրաժեշտ է սահմանված կարգով ամրացնել ՀՀ կառավարության համաֆինանսավորման ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին, գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարելով Ընկերության միջոցների հաշվին:</p>	<p>Համաձայն “Երևան Ջուր” ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության, 2009թ. հունիսի 1-ից մինչև 2009թ. հունիսի վերջն ընկած ժամանակահատվածում “Երևան Ջուր” ՓԲԸ-ն սկզբնական հաշվառման բոլոր փաստաթղթերը վերականգնել է միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան: 2010թ. հունվարի 1-ից “Երևան Ջուր” ՓԲԸ-ն հաշվապահական հաշվառումը վարում է միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան: Միաժամանակ “Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ վարկային և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներով ձեռք բերված գույքը հաշվառվում է հաշվապահական “Հայկական ծրագրերով”, որը պարբերաբար թարմացվում է:</p> <p>Ընդունվել է:</p>	<p>Հետագայում նշված գույքը “Երևան Ջուր” ՓԲԸ-ին հանձնելուց հետո վերջինիս կողմից կհաշվառվի միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների համապատասխան:</p> <p>Մշակվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ, որով ծրագրի շրջանակներում ներգրավված միջոցներով կատարված շինարարական աշխատանքների և մատուցված ծառայությունների արդյունքում ձևավորված ակտիվները, ինչպես նաև ծրագրի շրջանակներում ձեռք բերված և ընկերությանն ի պահ հանձնված՝ չօգտագործված 324,387.4 հազ. դրամի ապրանքանյութական արժեքներն ամրացվելու են “ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ” պետական կառավարչական հիմնարկին: Որոշման նախագծով նախատեսվում է նշված գույքի “Երևան Ջուր” ՓԲԸ-ի կողմից հետագա օգտագործման և տիրապետման, ինչպես նաև գույքի գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը “Երևան Ջուր” ՓԲԸ-ի միջոցների հաշվին կատարելու հետ կապված հարցերի կանոնակարգում:</p>